ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2010, 63, № 3, 59-67

ԵՐԿՐԱԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ

© 2010թ. Ա. Վ. Խոյեցյան, Ս. Ժ. Խաչատրյան

Երևանի Պետական Համալսարան, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ
0025, Երևան, Ալ. Մանուկյան 1. Հայաստանի Հանրապետություն
E-mail: akhoetsian@ysu.am
Հանձնված է խմբագրություն 22.11.2010 թ.

Հոդվածում քննարկվում է լանդշաֆտային պլանավորման, որպես միջառարկայական հիմնախնդիրներ լուծող գիտական նոր ուղղության կապը երկրաէկոլոգիական ուսումնասիրությունների հետ: Վերլուծված է լանդշաֆտային պլանավորման դերը տարածքային երկրաէկոլոգիական կամ լանդշաֆտաէկոլոգիական հետազոտություններում, որի խնդիրն է բնական և սոցիալ-տնտեսական միջավայրի տարածա-ժամանակային զարգացման վերաբերյալ տվյալների բանկի ստեղծումը, համակարգումը և վերլուծությունը:

Քաղաքակիրթ աշխարհի զարգացման հիմքում ընկած է տարածաշրջանների կայուն սոցիալ-տնտեսական և էկոլոգիական զարգացումը, կյանքի պայմանների որակական տարբերությունների համահարթեցումը, էկոլոգիական հավասարակշռության պահպանումը: Այն հատկապես կարևորվում է նոր սոցիալ-տնտեսական զարգացման ուղի բռնած երկրների համար, որտեղ աստիճանաբար ձևավորվում է ռեգիոնալ սոցիալ-տնտեսական և էկոլոգիական քաղաքականություն, իրականացվում է հողօգտագործման, բնական պայմանների և ռեսուրսների վերահաշվարկ, բնօգտագործման նոր ուղենիշների ընտրություն: Այդպիսի երկրների թվում է նաև Հայաստանի Հանրապետությունը, որի զարգացման ժամանակակից միտումները պետք է հաշվի առնեն բնական ռեսուրսների օգտագործման, միջազգային և ռեգիոնալ նշանակության նախագծերի կայունության և հուսալիության էկոլոգիական երաշխիքները: Էկոլոգիական հիմնախնդիրների լուծումը հնարավոր է միայն բնօգտագործողական գիտական և տնտեսական կառույցների կոորդինացման, էկոլոգիական դիրքորոշում ունեցող տարածքային պլանավորման միջոցով:

Էկոլոգիական կողմնորոշում ունեցող տարածքային պլանավորման կարևորագույն փուլերից է լանդշաֆտային պլանավորումը:

Լանդշաֆտային պլանավորման Եվրոպական փորձի վերլուծությունը Գերմանիայում, Հոլանդիայում, Մեծ Բրիտանիայում, Իսպանիայում, Ֆրանսիայում, Ռուսաստանում և այլն (Ландшафтное планирование..., 2002; Руководство по ландшафтному планированию, 2001 և այլն), վեր է հանում նրա մի շարք առանձնահատուկ կողմերը: Այն անմիջականորեն փոխկապակցված է տարածքային հողօգտագործման, ռեգիոնալ սոցիալ-տնտեսական պլանավորման հետ, հաշվի է առնում հասարակության կամ տեղական բնակչության լանդշաֆտների սոցիալ-տնտեսական ֆունկցիաների նկատմամբ ունեցած պահանջմունքները;

հնարավորություն է տալիս արագ արձագանքել հողօգտագործման այն կոնկրետ հիմնախնդիրներին, որոնք կարելի է վերանայել ժամանակի ընթացքում, ունի երկրաէկոլոգիական ուղղություն և միտված է պահպանելու տեսակներն ու բիոտոպերը, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանությունը, հաշվի է առնում տարածքի պատմական ու մշակութային զարգացման առանձնահատկությունները, որի արդյունքում առանձի դեպքերում ունենում է ոչ միայն էկոլոգիական ուղղվածություն, այլ նաև լանդշաֆտի (պեյզաժի) էսթետիկական կատարելագործման և պահպանման ֆունկցիա, պահպանվող տարածքների միասնական ցանցի ստեղծման ճանապարհով իրականացնում է Եվրոպական միասնական իրավական դաշտի ինտեգրման պրոցես:

Լանդշաֆտային պլանավորումը լուծում է միջառարկայական հիմնախնդիրներ, միավորելով պլաններ նախագծող, որոշող և իրականացնող գիտա-գործնական կազմակերպություններ: Նրա նպատակն է ապահովել հասարակության կայուն սոցիալ-տնտեսական զարգացում, նրանում տիրող էկոլոգիական իրավիճակների ճիշտ որոշում և գնահատում: Լանդշաֆտային պլանավորման էկոլոգիական հիմքը տարածքային երկրաէկոլոգիական կամ լանդշաֆտաէկոլոգիական հետազոտությունն է, որի խնդիրն է բնական և սոցիալ-տնտեսական միջավայրի տարածա-ժամանակային զարգացման վերաբերյալ տվյալների բանկի ստեղծումը, համակարգումը և վերլուծությունը: Արդյունքում, լանդշաֆտային պլանավորման ժամանակ հատուկ կարևորվում են համալիր աշխարհագրական հետազոտությունները:

Լանդշաֆտային պլանավորման և երկրաէկոլոգիական հետազոտությունների միջազգային փորձը արտացոլված է Ռուսաստանի էկոլոգիական ծրագրերի պետական կենտրոնի հրատարակած կրթական փաստաթղթերում, մշակված ռուս և գերմանացի մասնագետների կողմից (Руководство..., 2001), ինչը լայնորեն ներդրվում է գիտական և պլանավորման պրոֆիլի գերատեսչություններում՝ որպես բնապահպանական կողմնորոշմամբ տարածքային պլանավորման հիմք և կարևորագույն բաղկացուցիչ մաս, միջառարկայական գործիք, որը համաձայնեցման գործիքների օգտագործմամբ, միավորում է տնտեսական և քաղաքական որոշումներ կայացնող գերատեսչություններ, բնապահպանական հիմնախնդիրների բացահայտման և լուծման հիմնական հնարավորություն, կենտրոնացված հողօգտագործման տարածական վերակազմավորման շահավետ գործիք, բնակչության ժողովրդավարացման և սոցիալ-տնտեսական կայունացման հնարավորություն, միջազգային և տարածաշրջանային բնապահպանական սկզբունքների և ծրագրերի ներդաշնակման հարմար ճանապարհ և այլն: Այսպիսով, երկրաբնապահպանական հետազոտությունը, լինելով լանդշաֆտային պլանավորման հիմքը, հանդիսանում է շատ երկրների բնապահպանական քաղաքականության մի մասը՝ պետական մակարդակով:

Աշխարհագրությունը, իր էությամբ կիրառական, կոնստրուկտիվ գիտական առարկա է (Герасимов, 1985), որի նշանակությունը մեծանում է՝ բնական միջավայրում ընթացող գործընթացների և հասարակության սոցիալ-տնտեսական ակտիվության աճին զուգահեռ (Исаченко, 1991):

Համալիր աշխարհագրական (տարածա-ժամանակային) վերլուծությունը հնարավոր է միայն աշխարհագրական գիտությունների, միասնական աշխարհագրական հետազոտությունների ինտեգրման ճանապարհով:

Աշխարհագրական գիտությունների ինտեգրման անհրաժեշտությունը պայմանավորվում է նաև ֆիզիկական և սոցիալ-տնտեսական աշխարհագրական գիտություններում ստեղծված վիճակով: Ֆիզիկական աշխարհագրության մասնագետները ուսումնասիրում են աշխարհագրական բաղադրիչների և լանդշաֆտների մարդածին տրանսֆորմացիաների, ներգործության ձևերը, կայունության, արդյունավետության, նյութերի և էներգիայի մշտական կերպարանափոխումների գործընթացները, թեև, հաշվի չեն առնում այն պատմական, սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական կամ, նույնիսկ, քաղաքական պատճառները, որոնցով որոշվում է երկրահամակարգերի ժամանակակից վիճակը: Մյուս կողմից, բնակչության տարածքային տեղաբաշխումը, ներտարածաշրջանային սոցիալ-տնտեսական զարգացման միտումները, արտադրության կողմնորոշումը և այլ գործընթացների մեկնաբանությունը տեղի է ունենում բնական պայմանների, աշխարհաքաղաքական իրավիճակի և երկրահամակարգային մտածողության գրեթե լիակատար անտեսման ֆոնի վրա: Սոցիալ-տնտեսական աշխարհագրությունում հետազոտությունների համար որպես բազային տարածքային միավոր է դիտվում առավելապես վարչական շրջանը, ինչը, մեծ մասամբ, չի արտացոլում իրական վիճակի աշխարհագրական պատկերը:

Յանկալի է միասնական աշխարհագրական ուսումնասիրություններն անցկացնել տարածաշրջանային և տարածաշրջանա-տիպոլոգիական միավորների բացահայտման և վերլուծության հիման վրա: Տարածաշրջանային միավորի օրինակ են հանդիսանում էկոերկրահամակարգերը (բնական-տնտեսական խոշոր գոյացությունները), իսկ տարածաշրջանա-տիպոլոգիականի օրինակ են լանդշաֆտները: Երկրաէկոլոգիական իրավիճակների բացահայտման, ուսումնասիրման և կանխատեսման համար ունիվերսալ նշանակություն ունի երկրահամակարգային կամ լանդշաֆտային մոտեցումը (Преображенский, 1998; Исаченко, 1991): Երկրահամակարգերի սահմաններում միասնական աշխարհագրական ուսումնասիրությունները անցկացվում են երկրաէկոլոգիական հետազոտման՝ անալիզի (գույքագրման) և սինթեզի (գնահատման) ճանապարհով, ինչի արդյունքում պետք է սահմանվեն և օրինականացվեն (Ландшафтное планирование, 2002) լանդշաֆտների սոցիալ-տնտեսական գործառույթները, տարածքի տնտեսական օգտագործման կողմնորոշումը:

Իր բովանդակությամբ լանդշաֆտը այն տարածքային համալիրն է, որը բնութագրվում է միատարր երկրաբանական հիմքով, կլիմայով, ջրաբանական ռեժիմով, հողա-բուսական և կենդանական աշխարհով, էթնոաշխարհագրական առանձնահատկություններով, տնտեսական և սոցիալական ակտիվությամբ: Ժամանակակից լանդշաֆտը բնական և սոցիալ-տնտեսական միավորների փոխկապակցված համակարգ է, որը բնութագրվում է կառուցվածքով, գործունեությամբ, բնական ռեժիմով, էտոցիկլով և այլ առանձնահատկություններով: Դրանց բացահայտումը ռացիոնալ բնօգտագործման և բնապահպանությանն ուղղված տարած-

քային պլանավորման հիմքն է հանդիսանում (Дроздов, 1996): Նշված բնորոշող հատկանիշների ուսումնասիրությունը մի շարք աշխարհագրական դպրոցների գիտական գործունեության հիմնական խնդիրն է հանդիսանում, և դրանց համակարգումը բարդագույն խնդիր է: Միասնական աշխարհագրական ուսումնասիրությունների համար որպես կոնցեպտուալ հիմք պետք է տեսնել բնական-տարածքային համալիրների տարածա-ժամանակային անալիզը և սինթեզը (Беручашвили, 1986): Տեսական կոնցեպցիայի համաձայն կատարելապես հետազոտվում են լանդշաֆտների վերոնշյալ երկրաէկոլոգիական առանձնահատկությունները, որոնց ուսումնասիրությունը իրականացվում է ինչպես ստացիոնար, այնպես էլ դաշտային և աերովիզուալ մեթոդներով: Կառուցվածքա-գործառույթային և էթոլոգիական բնութագրերի անձնագրավորումը և երկրատեղեկատվական համակարգերի ստեղծումը, իր հերթին, կանխորոշում է աշխարհագրական ճյուղային առարկաների կոորդինացումը: Հենց մեր նշածների հիման վրա էլ զարգանում է երկրաէկոլոգիական (լանդշաֆտա-էկոլոգիական) ուղղությունը:

Հայաստանում, ինչպես լեռնային բոլոր երկրներում, սոցիալ-տնտեսական և բնապահպանական գործընթացները բնութագրվում են լավ արտահայտված տարածաժամանակային և լանդշաֆտա-էկոլոգիական, պատմական և էթնոմշակութային բազմազանությամբ և ինքնատիպությամբ:

Այսպիսի բազմազանությունը, համադրված բարձր տնտեսական-ռեսուրսային և ռեկրեացիոն պոտենցիալով, կարևոր աշխարհա-ռազմավարական դիրքի հետ, դառնում է ոչ միայն առանձնահատուկ միջազգային հետաքրքրության, այլև մարդածին ներգործության ազդեցության տակ բնական միջավայրի ոչ միատարր տրանսֆորմացիայի պատճառ:

Բնապահպանական կողմնորոշմամբ տարածքային պլանավորման մեջ երկրաէկոլոգիական ուսումնասիրությունների նշանակությանն են նվիրված բազմաթիվ գիտնականների աշխատությունները, ինչպիսիք են, օրինակ, Ա. Գ. Իսաչենկոն, Վ.Ս.Պրեոբրաժենսկին, Կ.Ֆ.Շրայբերը, Ե.Նիիմանը, Ա.Վ.Դրոզդովը, Դ.Բ. Ռիկլեբան, Ն.Լ.Բերուչաշվիլին և այլոք, ինչպես նաև գիտական կոլեկտիվներ (Охрана ландшафтов..., 1974; Геоэкологические ..., 1989; Геоэкология ..., 1990 և այլն), որոնք հիմնականում վերաբերվում են տեսական և մեթոդոլոգիական հարցերին: Դրանցում երկրաէկոլոգիական հետազոտությունները հանդիսանում են միասնական աշխարհագրական ուսումնասիրությունների նախադրյալ, որոնք իրենց հետաքրքրությունների ոլորտում միավորել են երկրահամակարգերի գույքագրումը, գնահատումը, մոնիթորինգը և կանխատեսումը, աստիճանաբար մոտեցել են լանդշաֆտների բնաէկոլոգիական նորմայավորման գիտական և մեթոդոլոգիական սահմանման անհրաժեշտությանը: Նման անհրաժեշտությունը պայմանավորված է լանդշաֆտների կողմից երեք ֆունկցիաների կատարման պրոբլեմատիկայի հետ՝ բնապահպանական առումով կայուն բնական միջավայրի, գենոֆոնդի և ռեսուրսների պահպանում (Геоэкологические..., 1989):

Վերը նշված գիտական գրականության մեջ երկրաէկոլոգիական ուսումնասիրությունների և լանդշաֆտային պլանավորման համար որպես տեսական հիմք են ծառայում լանդշաֆտագիտության մի շարք ավանդական ուղղություններ՝ բնական պայմանների և մշտապես թարմացվող ռեսուրսների գույքագրումը, լանդշաֆտային քարտեզի ստեղծումը (որպես հիմք այլ թեմատիկ քարտեզների համար), աէրոտիեզերական լուսանկարների ապաշիֆրավորումը և համեմատական վերլուծությունը (լանդշաֆտների ժամանակակից վիճակի հիմնական պարամետրերը որոշելու համար), տվյալների բանկի ստեղծումը (որոնցում ներկայացված է լինելու տեղեկատվություն բնական և սոցիալ-տնտեսական պարամետրերի վերաբերյալ): Տեսական առումով երկրաէկոլոգիական հետազոտությունների արդյունքները հնարավորություն են տալիս գնահատել երկրահամակարգի ժամանակակից և կանխատեսումային վիճակը (ինչը, իր հերթին, պատկերացում է տալիս կոնկրետ լանդշաֆտի կողմից սոցիալ-տնտեսական գործառույթների կատարման մասին), գործունեությունը, պոտենցիալը և այլն:

Երկրաէկոլոգիական հետազոտությունների հիմնական էությունը կայանում է լանդշաֆտի բնապահպանական վիճակի, դրա բաղկացուցիչ մասերի փոխադարձ կապերի և տարածքային կազմակերպման, մորֆոլոգիական միավորների և այլ ցուցանիշների ուսումնասիրման մեջ: Դրանք պետք է իրականացվեն տարածքների երկրաէկոլոգիական (ընդհանուր աշխարհագրական, լանդշաֆտային, սոցիալ-տնտեսական, բնապահպանական) անալիզի և սինթեզի, այսինքն տարածքի գնահատման եղանակով:

Ընդհանուր աշխարհագրական անալիզի հիման վրա դիտարկվում են ուսումնասիրվող տարածաշրջանի աշխարհագրական դիրքը, մակերեսը, սահմանները, հարևան շրջանները, ընդհանուր ֆիզիկա-աշխարհագրական, սոցիալ-տնտեսական և պատմա-աշխարհագրական առանձնահատկությունները:

Լանդշաֆտային անալիզի արդյունքում պետք է բացահայտվեն ֆիզիկա-աշխարհագրական բաղադրիչների և տարածքային համալիրների բնական-լանդշաֆտային պոտենցիալը, կառուցվածքային, գործառույթային, դինամիկ, էթոլոգիական և ռեսուրսային առանձնահատկությունները:

Բնական-լանդշաֆտային պոտենցիալի հիմնական ցուցանիշներն են՝ ռելիեֆը, երկրաբանական կառուցվածքը և հանքային ռեսուրսները, բուսականությունը և ֆիտոռեսուրսները, կենսաբազմազանությունը, կենդանական աշխարհը և կենդանական ռեսուրսները, հողերը և հողային ռեսուրսները:

Երկրաէկոլոգիական հետազոտություններում կարևոր է տարածքի (տարածաշրջանի) սոցիալ-տնտեսական վիճակի վերլուծությունը, որի օգնությամբ արտացոլվում են անմիջականորեն լանդշաֆտի բնապահպանական վիճակի վրա ազդող գործընթացները: Կարևոր է նաև, որ սոցիալ-տնտեսական տեղեկատվությունը (ժողովրդագրական իրավիճակը, տնտեսության ճյուղերի վիճակը, սոցիալական ֆոնդը) տարածության մեջ տեղաբաշխված լինի այնպես, որպեսզի առավելագույնս

ներկայացնի դրանց լանդշաֆտային դիֆերենցումը: Նման վերլուծությունը միաժամանակ ենթադրում է նաև պատմական, մշակութային և ռեկրեացիոն արժեքների դիտարկումը: Տարածքների սոցիալ-տնտեսական վիճակը որոշվում է ժողովրդագրական ֆոնով, տնտեսության առանձին ճյուղերի ուղղվածությամբ, տրանսպորտային հաղորդակցություններով, ինչն էլ իր հերթին ուղղակի կապի մեջ է գտնվում մարդածին ներգործության մասշտաբների և ձևերի, լանդշաֆտի ժամանակակից վիճակը կանխորոշող պարամետրերի հետ: Լանդշաֆտի երկրաէկոլոգիական առանձնահատկությունների վրա զգալի ազդեցություն է թողնում գյուղատնտեսության մասնագիտացումը: Օրինակ, Հայաստանում գյուղատնտեսության՝ դեպի բուսաբուծությունը կողմնորոշված մասնագիտացումը, կանխորոշում է հարթավայրային և ստորին լեռնա-անտառային լանդշաֆտների և հարակից տարածքների դեգրադացիան, այն դեպքում, երբ անասնապահությունը բնապահպանական հիմնախնդիրներ է ստեղծում վերին լեռնա-անտառային և ենթաալպիան լանդշաֆտներում:

Լեռնային տարածքների լիարժեք երկրաէկոլոգիական անալիզի համար անհրաժեշտ է ուսումնասիրել տրանսպորտային ցանցի բնույթը և հաճախականությունը: Լեռնային շրջաններում տրանսպորտային հաղորդակցության հիմնական միջոցը ավտոմոբիլային տրանսպորտն է, որի ինտենսիվությունը կախված է ավտոմոբիլային ճանապարհներից: Որքան ավելի բարձր է ավտոմոբիլային ճանապարհի որակը և որքան ավելի բարեկարգ է այն, այնքան ավելի մեծ է մարդածին ներգործության աստիճանը: Եթե ասֆալտապատ ճանապարհներից ինտենսիվ ներգործությունը ուղղաձիգ և միջին ուղղաձիգության լանջերով ռելիեֆի պայմաններում նկատվում է նույնիսկ 5-10կմ հեռավորության վրա, ապա այդ նույն ցուցանիշները ժամանակավոր ճանապարհների համար իջնում են մինչև 0.5-1կմ: Ելնելով սրանից, մարդածին գործոններով պայմանավորված երկրաէկոլոգիական հիմնախնդիրների կանխատեսումը կարելի է իրականացնել երկու գործոնների վերլուծությամբ՝ ճանապարհներից հեռու գտնվելու և ճանապարհների կարգի:

Տարածաշրջանների սոցիալ-տնտեսական վիճակի վրա ազդում է նաև աշխարհաքաղաքական վիճակը: Այստեղ նկատի են առնվում մի քանի գործոններ, որոնց թվում հիմնականներն են՝ հարևան տարածաշրջանների ընդհանուր տնտեսական վիճակը, դրանց բնապաշարային պոտենցիալը, տնտեսական զարգացման միտումները, հաղորդակցվելիությունը և այլն: Առանձին դեպքերում ընդհանուր տնտեսա-քաղաքական վիճակը (հատկապես ՀՀ սահմանամերձ շրջաններում) որոշում է նաև լանդշաֆտային պլանավորման վիճակը և, համապատասխանաբար, հիմնական ուղղությունները:

Տարածքի էկոլոգիական վիճակի անալիզը ենթադրում է երկու փոխկապակցված հարցերի ուսումնասիրությունն ու համեմատական վերլուծությունը՝ բնական միջավայրի վիճակի (բնապահպանական վիճակի և այն կազմող աշխարհագրական բաղադրիչների օգտագործման հետ կապված հիմնախնդիրների ուսումնասիրությունը) և լանդշաֆտների

էկոլոգիական պոտենցիալի (արդյունավետության, բազմազանության և այլն):

Ուսումնասիրվող տարածքի երկրաէկոլոգիական անալիզի հաջորդ փուլը լանդշաֆտա-էկոլոգիական սինթեզն է (գնահատումը), որը իր հերթին բաղկացած է մի քանի աստիճաններից: Առաջին մակարդակում որոշվում է ժամանակակից լանդշաֆտների վիճակը (կառուցվածքային, դինամիկ, գործառութային և էթոլոգիական առանձնահատկություններից ելնելով), բնա-մարդածին ներգործությունների ձևերը, կայունության աստիճանը և պոտենցիալը: Երկրորդ մակարդակում որոշվում են լանդշաֆտների ժամանակակից և հեռանկարային սոցիալ-տնտեսական գործառույթները:

Աշխարհագրական գրականության մեջ գոյություն ունեն մի քանի տասնյակ տերմիններ, որոնք այս կամ այն ճշտությամբ արտացոլում են ոչ միայն տարածքային համակարգի վիճակը, այլև հեղինակի (գիտնականի) վերաբերմունքը դրա արտաքին կերպարին, կառուցվածքին և գործունեությանը: Օրինակ, պայմանականորեն անփոփոխ լանդշաֆտ, կուլտուրական լանդշաֆտ, բնա-մարդածին տարածքային համալիր, սոցիալ-էկոլոգիական տարածքային համալիր, բնական, կերպարանափոխված, վերահսկվող երկրահամակարգ, տեխնածին, էկոցիդացված, գեոցիդացված, մարդածին, բնա-մարդածին լանդշաֆտ, ինտեգրալ երկրահամակարգ, բնա-մարդածին աշխարհագրական համակարգ, բնաարտադրական համալիր և այլն:

Ըստ պրոֆեսոր Ա. Ս. Իսաչենկոյի (Исаченко, 1991) բնական լանդշաֆտները բաժանվում են չորս կատեգորիայի՝ 1) պայմանական-անփոփոխ (լանդշաֆտներ, որտեղ տնտեսական գործունեություն գործնականում չի վարվում, բաղադրիչները ներգործության չեն ենթարկվում և նկատվում են տեխնոլոգիական թափոնների աննշան կուտակումներ: Հայաստանում այդպիսիք են նիվալ և սուբնիվալ լեռնային լանդշաֆտները), 2) աննշան փոփոխված (լանդշաֆտներ, որոնցում իրականացվում է էքստենսիվ տնտեսական գործունեություն՝ որսորդություն, ձկնորսություն, ընտրովի անտառահատում, աննշան ներգործության են ենթարկվում միայն առանձին բաղկացուցիչներ, բնական համալիրը, միջբաղադրիչային կապերը պահպանված են, կամ էլ փոփոխություններն այնքան աննշան են, որ ինքնավերականգնման գործընթացները ինտենսիվ բնույթ են կրում, այսպիսիք են Հայաստանում ալպիան և մերձալպիան լանդշաֆտների մեծ մասը) 3) խիստ փոփոխված (լանդշաֆտներ, որոնք երկարատև և տարերային ազդեցության են ենթարկվում, բաղկացուցիչների մեծ մասը կերպարանափոխված են, խախտված է լանդշաֆտի կառուցվածքը և միջբաղադրիչային կապերը, զարգացած են երկրաէկոլոգիական բացասական գործընթացները: Այդպիսիք են Հայաստանի ստորին և միջին լեռնային լանդշաֆտների մեծ մասը), 4) կուլտուրական կամ ռացիոնալ փոփոխված (լանդշաֆտներ, որոնցում միջբաղադրիչային մասերը նպատակամղված փոփոխված են, դրանց գործունեությունը հնարավոր է միայն անընդհատ կարգավորման դեպքում, այսպիսիք են Հայաստանի միջլեռնային հարթավայրերի և գոգավորությունների լանդշաֆտների մեծ մասը): Դասակարգումը, որը որոշակի առումով հաշվի է

առնում հորիզոնական կառուցվածքի և տնտեսական գործունեության յուրահատկությունները, ընդհանուր առմամբ ընդունելի է, չնայած դրա առանձին կատեգորիաներում, կոնկրետ չափանիշների բացակայության պայմաններում, դժվար է կողմնորոշվել: Բարդությունը կայանում է նաև նրանում, որ վերը նշված դասակարգման մեջ ոչինչ չի ասվում, թե ուղղաձիգ կամ հորիզոնական կառուցվածքի տրանսֆորմացիայի հատկապես որ ձևը պետք է հիմք հանդիսանա, որպեսզի տվյալ լանդշաֆտը դասակարգվի, խիստ փոփոխված:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Беручашвили Н. Л. Четыре измерения ландшафта. М.: Мысль, 1986, 341 с.

Геоэкологические основы территориального проектирования и планирования. М.: Наука, 1989, 141 с.

Геоэкология: региональные аспекты. Сб. Мат. к IX съезду общества. Л.: Изд. ГО СССР, 1990, 126 с.

Герасимов И. П. Фундаментальные проблемы географической науки. В сб. Методологические аспекты современной конструктивной географии. М.: 1985, с. 7-21.

Дроздов А. В. Ландшафтное планирование и его перспективы в России. Изв. АН РФ, сер. географ, 1996, №1, с. 27-36.

Исаченко А. Г. Ландшафтоведение и физико-географическое районирование. М.: В. Школа, 1991, 229 с.

Ландшафтное планирование: принципы, методы, европейский и российский опыт. Иркутск: Изд. ИГ СО РАН, 2002, 165 с.

Охрана ландшафтов. Толковый словарь. М.: Прогресс, 1974, 367 с.

Преображенский В. С. Острые проблемы ландшафтоведения на рубеже веков. Изв. АН РФ, сер. географ, 1998, №3, с.18-32.

Руководство по ландшафтному планированию. Т. 1,2. М.: Госцентр экологических программ, 2001, 73 с.

Գրախոսող Գ. Մ.Կարապետյան

ГЕОЭКОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ И СИНТЕЗ В ЛАНДШАФТНОМ ПЛАНИРОВАНИИ

А. В. Хоецян, С. Ж. Хачатрян

Резюме

Под основными принципами развития цивилизованного мира подразумевается устойчивое социально-экономическое и экологическое развитие регионов, сближение и управление жизненного уровня, сохранение экологического равновесия. Это особенно касается государств с новой социально-экономической ориентацией, в которых постепенно формируется региональная социально-экономическая и экономическая политика, происходит ревизия землепользования природных условий и ресурсов, новая ориентация природопользования. В число таких стран входит и Армения, современные тенденции развития которой

должны учитывать экологические гарантии использования природных ресурсов, устойчивость и надежность проектов международного и регионального значений. Разрешение экологических проблем возможно только путем координации природопользовательских научных и хозяйственных учреждений, экологически ориентированного территориального планирования.

GEOECOLOGICAL ANALYSIS AND SYNTHESIS IN LANDSCAPE PLANNING

A.V. Khoetsyan, S. Zh. Khachatryan

Abstract

The landscape planning consists from bear of the interconnected steps, among which supreme are considered geoecological the analysis and synthesis (estimation) of territories. By the geoecological analysis of territory, that in turn owes fit with of geoecological inventory of landscapes, in the greater measure, is determine their structural, functional, dynamic and ecological of features. The geoecological synthesis can be carried out by an estimation of owls of a condition, forms and scales of influences, geoecological sweat, stability and about social purpose (assignment) (modern and perspective social-geoecological of functions) landscapes. The similar approach to us represents a cart maintenance ecological of reliability of these functions, establishment of character economical of measures and forms at-nature use (extensive, limited, intensive etc.).

The socio economic functions of a landscape are caused of public sweat and landscape ecological condition. They prior similar and identical. For ecologically focused territorial planning of mountain territories the special meanings (importance) have at nature guard, providing the environment, producing resources and its function of being recreational and useful for settlements. Recreational function as the usefulness of settlements, more often, examine as a minor.

The geoecological analysis and synthesis of mountain territories of Armenia, suitable to development landscape of the plans and programs, has revealed, that making territorial units of mountain landscapes have different functions determining, basically, modern condition, nature-resource potential and stability (in particular by mode of migration).